

ՍՐ. ՅՈՎՀԱՆՆԵԼՈ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻԹՐՈՅՑՔԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



REV. DIRAN PAPAZIAN
REV. PAREN AVEDIKIAN
PASTORS

22001 NORTHWESTERN HIGHWAY

★ PHONE: 356-1910 ★

SOUTHFIELD, MICHIGAN 48075

29 Սեպտ. 1970

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,
ի նիւ Եղբայր,

Սիրելի Սըրբազան,


Սոյն նամակով կը փախաքէի տեղեակ պահել ձեզ՝ Եկեղեցւոյս այժմեան իրական կացութեան, ամառնային արձակութեան ընթացքին ծուխէս ներս ստեղծուած արուեստական փոքրիկ տագնապին առնչութեամբ՝ ի հետեւանք խուժանավար Հոգեբանութեամբ ինչ մը Հոգաբարձուներու անպատճիսանտու եւ չարամիտյարաբին՝ որու կապակցութեամբ ստիպուեր էիք Հոս շտապել։ (Խախուց աշխարհ)

Մեր իրարու հետ ունեցա՞ն հեռաձայնային խօսակցութենէն վերջ, մենք Հոս ունեցանք ժողով մը, զոր ես ինքս էի Հրաւիրեր՝ մասնակցութեամբ Ծխական Խորհուրդին, Թեմական Պատգամաւորներուն, Տիար Ա. Մանուկեանին եւ տեղւոյս Եկեղեցականաց դասունք:

Հսելի վերջ կողմերը, այն է՝ Հոգաբարձութեան եւ Հովուին, երեսփոխաններու գորաւոր թելադրութիւնը այն եղաւ որ՝ պահուի այժմեան գոյավիճակը եւ փոխանակ նոր Հովուի մը մասին մտածելու, քայլեր առնուին Եկեղեցին օժտելու համար գործադիր քարտուղարով մը - ֆքզէքիւթիվ նեքընթերի- եւ կամ ընդհանուր վարիչ գործակատարով մը - ճէնըըըլ ետմինիսթընյթըր-, որպէս զի Հովիւը ձերբազատութեավ գրասենեակի առօրեայ տաղտուկին։ Կարենայ նուիրուիլ անարգել բուն իսկ իր Հոգեւոր գործերուն եւ առաջնորդութիւն տայ այս հսկայածաւալ գաղութին, միանգամայն ժամանակ գտնելով տնայցելութեան։ Ապագային, երբ Եկեղեցին ի վիճակի ըլլայ, այն ատեն մէկէ աւելի Եկեղեցականներ ունենալ անշուշտ թէ փախաքելի պիտի ըլլար, տրուած ըլլալով որ գործին տարողութիւնը միշտ ալ պիտի պահանջէր մէկէ աւելի Եկեղեցականներու անհրաժեշտութիւնը այս գաղութին ներս։ Բայց նախ քան այդ հարկ է որ գործը կազմակերպուի, իսկ նոր Հովիւի մը ներկայութիւնը կացութենէն բան չպիտի փոխեր բնաւ եւ դարման մը չպիտի ըլլար հարթելու համար մեր դժուարութիւնները որոնք առաւելաբար արդիւնքն են վարչական եւ գրենական գործերու լայնածաւալ բազմազանութեան, ինչպէս նաեւ Հովուի եւ Ծխական Խորհուրդի փոխյարաբերութեանց անկանոնութեան որ կը բղխի առաւելաբար այս վերջիններուն աշխարհիկ մտայնութիւններէն։

Հարկ է աւելջնել նաեւ որ ծխական խորհուրդին մէջ բոլորը նոյնատեսակ չեն մտածեր Հովուի փոփոխութեան հարցին շուրջ, եւ յետոյ նաեւ՝ նման ճակատագրական որոշում մը Հոգաբարձութեան չի մնար առնել բոլորովին առանձինն պատասխանատութեամբ, այլ հարկ էր որ խորհուրդակցութիւններ կատարուի ին պատգամաւորներուն հետ միասնաբար, եւ անկախաբար ասկէ՝ նաեւ ժողովուրդին բազկերակն ալ քննարկելու է, հասկանալու համար թէ որչափով օգտակար կամ վնասակար կը նայ ըլլալ գաղութին համար նման արմատական փոփոխութիւն մը, իսկ ինչ խօսք որ ենթական ինքն ալ գիտնալու է թէ ինչով կը մեջադրուի եւ թէ արդեօք ըսուածները կը համապատասխանն իրականութեան, եւ թէ ով դատաւոր պիտի ըլլայ Հոգաբարձութեամբ շահատակութեանց։ Առ նուազն անիրաւ եւ անհիմն վերաբրութները ջրելու

ԱՐ. ՅՈՎՀԱՆՆԻՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԽԱԳՈՅՆ ՏԻԹՐՈՅԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

REV. DIRAN PAPAZIAN
REV. PAREN AVEDIKIAN
PASTORS

22001 NORTHWESTERN HIGHWAY

★ PHONE: 356-1910 ★

SOUTHFIELD, MICHIGAN 48075

— Շարունակութիւն —

առիթ մը տրուելնու է ենթակային, եւ այդ միայն կրնայ ըլլալ ժողովի մէջ իր մասնակցութեամբ եւ ի ներկայութեան անաշառ մարմնի մը՝ գաղութին յարգելի անդամներէն կազմուած։ Ի վերջոյ պատմութեան անցած են Միջին Դարու հաւատաքնութեան շըջանները։ Ես պատճառներ ունիմ եւ կրնամ հիմնաւորել այն վախս թէ՝ նման փոփոխութիւն մը կրնայ վրդովել գաղութին անդորրութիւնը, փոխանակ անոր շինութեան նպաստելու։ Հոգաբարձուները պէտք չէ որ որեւէ ատեն քաջալերուին Հովուական փոփոխութեան կամայական առաջարկ ներկայացը-նելու Առաջնորդին, առանց տեղույն վրայ սպառելու ամեն կարելիութիւն՝ փո-խադարձ զիջումով՝ եթէ հարկ է, եւ իրար-հասկացողութեամբ, սիրոյ մթնոլորտի մէջ։ Եկեղեցին Աստուծոյ տունն է, ծիարձակարան չէ, եւ այս մարդիկ գիտ-նալու են որ Աստուծոյ գործը ընելու միայն կանչուած են, եւ ոչ թէ սակա-րանային հաշիւներ մաքրելու, մէկ կողմէն իրենց ապիկարութիւնը պարտկելու եւ միւս կողմէ ալ իրենց անքնական փառասիրութեանց եւ նախասիրութեանց յա-գուըդ տալու համար։

Այս պայմաններու տակ ըուրեմն, ձեր գործը զգալապէս դիւրացած պիտի ըբլայ՝ փոխանակ Հովուի փոփոխութեանց անհարկի դժուարութեանց մատնութիւնու, խօսք հասկցնելու հոգաբարձութեան որ՝ առ այժմ տրամադրելի մարդ չունիք, եւ թէ՝ տուեալ պայմաններու տակ լաւագոյնը պիտի ըլլայ՝ բոլոր տարակարձութիւնները հարթել եւ թէ՝ տեղույն Հովուին հետ համագործակցաբար եւ համերաշխութեամբ եկեղեցւոյ առաւել պայծառութեան համար միջոցներ խոր հիլ, ծրագիրներ մշակ ել, ու շինարար նպատակներ հետապնդել։ Անհարկի դժուարութիւններ՝ միայն կրնան վնասել գաղութին վարկին, բան մը որմէ խուսափելու ամեն ջանք ի գործ դնելու է, վասն սիրոյն Քրիստոսի։ Մեր բոլորին ալ ներկայութիւնը եկեղեցւոյ գործին շուրջ՝ պէտք է հետապնդել Աստուծոյ գործին ներդաշնակ կատարումը՝ անձնակա-նութեանց պատուածքներին անդին ցատկելով եւ անանձնական հոգեբանութեամբ կա-տարելով մեզ ի ինկած պարտականութիւններն ու պատասխանատուութիւնները։ Այս դիտողութիւնը կարեւոր է որ ըլլայ ձեր կողմէ իրենց, որպէս զի հոգաբարձա-կան կազմէն կարգ մը տարբեր որոնք յոյսեր կապած են ձեր կողմէ արտայայտը-ւած կարգ մը խոստումներու, այդպիսին թող գիտնան թէ՝ այդ յոյսերը անար-դարանալի եւ անիրականապէի են, այլապէս անոնք սպասողական դիրք մը գրաւելով կրնան խոչընդոտ ըլլալ գործերու կանոնաւորութեան, եւ ատկ է միակ տուժողը կ՝ ըլլայ եկեղեցին եւ խեղճ գաղութը։ Այս մարդիկ փոքրիկ ատեն մըն ալ հոս ։ Են եւ ապա պիտի անհետանան իրենց ժամանակի սպառումովը, բայց եթէ այժմէն չի սանձահարուին ու չի սրբագրուին այն ատեն ատիկա աղիտաբեր կրնայ ըլլալ։

Հայցելով Աստուծածային իմաստութիւն ձեր Առաջնորդական պատասխանատու գործերու տնօրինման մէջ,

Այսու Մնամք

Խոնարհ Աղօթակից՝
Տիգրան Արքա

Տէր Տիրան ՔՀՆՅ. Փափազեան,
Հովիւ